ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացումը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի միջոցով»

Ուսուցիչ՝ Կարինե Ասլանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԱՍ

1. Քննադատական մտածողության զարգացման կարևորությունը կրտսեր դպրոցականի կյանքում.....5
2. Ստեղծագործական մտածողության զարգացման անհրաժեշտությունը կրտսեր դպրոցում.....9
3. Հարցադրումների մեթոդի դերը՝ կրտսեր դպրոցականի ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացման գործում.....13

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Կրտսեր դպրոցականների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման հնարավորությունները «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման ընթացքում.....17

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական նյութը նորովի մատուցելու և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու ձգտումը կրթական համակարգի շահագրգիռ կողմերին դրդել է նոր սկզբունքներ և մարտավարություններ մշակել, արժևորել կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների դերը, ապահովել վերջիններիս համաչափ ու համակողմանի զարգացումը, ինչն անչափ կարևոր է մերօրյա իրականությունում: Նոր կրթական պահանջների հիմքում դրված է այն առանցքային գաղափարը, որ դասավանդելն ու սովորելը պետք է հավասարապես փոխկապակցված լինեն, միայն այդ դեպքում սովորելը արդյունավետ դասավանդման արդյունք կհամարվի: Այս համատեքստում շատ է կարևորվում նաև մտածողության զարգացումը, մասնավորապես՝ զարգացած ստեղծագործական ու քննադատական մտածողության առկայությունը կարևոր ազդեցությունն է ունենում կրտսեր դպրոցականի համակողմանի զարգացման վրա, ուստի նշված մանկավարժական խնդիրներն այսօր մեր հանրակրթական համակարգում կարևոր ու նշանակալի արժեք ունեն:

Քննադատական մտածողությունը վերլուծելու, գնահատելու, դատողություն անելու, ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ սեփական կարծիքը զարգացնելու ոչ ստանդարտ իրավիճակում գիտելիքները կիրառելու կարողությունն է, իսկ ստեղծագործական մտածողությունը թույլ է տալիս, տեսնել կյանքի գեղագիտությունը, սովորելու ընթացքին մոտենալ ստեղծագործաբար, ունենալ զարգացած երևակայություն: Զարգացած մտածողություն ունեցող դպրոցականը կկարողանա արդյունավետ աշխատել տեղեկատվական տարածության հետ և ընդունել շրջապատող աշխարհի և տեսակետների բազմազանությունը: Ակնհայտ է, որ նա կկարողանա հաջողությամբ հարմարվել ժամանակակից կյանքին և գտնել իրեն հանձնարարված խնդիրները լուծելու օպտիմալ ուղիներ:

Այսպիսով, տարրական դպրոցում դասավանդող ուսուցիչը պետք է ընդառաջ գնա կրթական նոր մարտահրավերներով պայմանավորված պահանջներին՝ լինի ստեղծագործ, նորարար, ունենա մարդասիրական մղումներ, մասնագիտական ու մարդկային բարձր որակներ: Ուսուցիչը պետք է հասկանա, որ իր անմիջական

ներգործությունն ու ուղղորդումը առանցքային նշանակություն ունեն կրտսեր դպրոցական տարիքի սովորողների բնականոն զարգացման, քննադատական ու ստեղծագործական մտածողության ձևավորման ու զարգացման վրա, հետևաբար՝ պետք է իրականացնի այս կարողությունների զարգացմանն ուղղված մանկավարժական աշխատանքներ:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նոր ժամանակի կրթական մարտահրավերներով, որոնց առանցքում նաև կրտսեր դպրոցականների քննադատական ու ստեղծագործական մտածողության զարգացման անհրաժեշտությունն է:

Հետազոտության նպատակն է Ուսումնասիրել կրտսեր դպրոցում ուսուցչի մանկավարժական գործունեության դերը՝ սովորողների՝ քննադատական ու ստեղծագործական մտածողության ձևավորման ու զարգացման վրա:

Հետազոտության խնդիրները.

- Ուսումնասիրել համապատասխան գրականություն:
- Դիտարկել դասի արդյունավետության բարձրացմանն ուղղված մանկավարժական պայմանները:
- Առանձնացնել մեթոդական այնպիսի լուծումներ, որոնք կնպաստեն «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման ընթացքում կրտսեր դպրոցականների քննադատական ու ստեղծագործական մտածողությունը զարգացնելուն:

ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԱՍ

1. Քննադատական մտածողության զարգացման կարևորությունը կրտսեր դպրոցականի կյանքում

Յուրաքանչյուր ուսուցիչ ցանկանում է, որ իր դասերին տիրի աշխույժ, մասնակցային մթնոլորտ, որտեղ սովորողը ոչ միայն գիտելիք է ձեռք բերում կամ կիրառում, այլև ունակ է նաև դատողություններ կատարելու, վերաբերմունք ու դիրքորոշում հայտնելու, այս կամ այն խնդրո առարկային քննադատական հայացք զցելու: Սա ենթադրում է, որ սովորողը կարող է ցուցաբերել վառ երևակայության, ֆանտազիա, կարող է համեմատել, կառուցել ու տեսնել պատճառահետևանքային կապեր, մտածել խնդրահարույց իրավիճակների մասին և առաջարկել դրանց համար ելքերը: Նման ունակություններով սովորողն ունի զարգացած քննադատական մտածողություն:

Ներկայիս կրթական համակարգում մենք չենք կարող սահմանափակվել այնպիսի մեթոդներով, որոնք խրախուսում են սովորողի՝ գիտելիքների մեխանիկական ընկալումը. ժամանակակից կյանքը պահանջում է մտածողության որակական բարձր մակարդակ, լայն շրջանակում հարմարվելու կարողություն, ինտելեկտուալ համապատասխան որակներ: Այս ամենն էլ իր հերթին պահանջում է նորարար ուսուցիչներ, ովքեր պատրաստ են զարգացնել սովորողների քննադատական միտքը, ինքնուրույն կարծիք արտահայտելու կարողությունը: Զարգացած մտածողություն ունենալու առաջին նախապայմանը քննադատական մտածողության բարձր մակարդակն է, այս մասին է խոսում Դ Հալպերնը, ով հատկապես վերջին քսան տարիների ընթացքում տեղի ունեցող առաջընթացով պայմանավորված՝ կարևոր է համարում քննադատական զարգացած մտածողություն ունեցող սովորողների առկայությունը: Նա այս համատեքստում առաջ է քաշում մանկավարժական կարևորագույն մի խնդիր՝«Ինչպես սովորեցնել և ոչ թե ինչ սովորեցնել»[1]: Ռ.Պոլը տալիս է քննադատական մտածողության իր մեկնաբանությունը. «Սա ճանապարհ է հարթում առհասարակ մտածողության զարգացման համար, քանի որ քննադատաբար մտածել սովորել, նշանակում է

[1] Халперн Д. Психология критического мышления / Перевод с англ. / Д. Халперн. — М.: Питер, 2000. — 6 с.

ունենալ հասկանալու, ըմբռնելու կարողություն»[2]: Հղում անելով մի շարք այլ մտածողների ուսումնասիրություններին՝ նկատենք, որ նրանց մեծ մասը քննադական մտածողությունը կապում է ըմբռնելու, կշռադատելու, դատելու կարողությունների հետ:

Քննադատական մտածողության կարևորությունը՝պայմանավորված է նրանով, որ սովորողը կարողանում է փաստը, իրողությունը տարբեր տեսանկյունից վերլուծել ու մեկնաբանել:Սա նաև ենթադրում է տարբեր երևույթների իջև պատճառահետևանքային կապերը տեսնելու, գնահատելու ունակություն: Քննադատական մտածողությունը ենթադրում է նաև ազնվություն այն իմաստով, որ մենք չպետք է հուզականորեն կողմնորոշվենք որևէ իրավիճակի նկատմամբ: Զարգացած քննադատական մտածողության առկայության պարագայում իրավիճակի վերաբերյալ բոլոր հնարավոր տեսակետները պետք է հաշվի առնել նախքան վերլուծելը: Սա օգնում է արդյունավետորեն լուծել խնդիրները: Քննադատական մտածողությունը պետք է զարգացնել դեռ վաղ մանկական տարիքից , քանի որ ավելի հասուն տարիքում մարդու մտածելակերպի փոփոխումը ծայրաստիճան դժվար է[3]: Քննադատական մտածողությունը դիտարկման, փորձի, դատողության միջոցով հավաքած տեղեկատվությունը ակտիվորեն համակարգելու, կիրառելու, վերլուծելու և գնահատելու մտավոր գործընթաց է: Այն թույլ է տալիս փաստերը գնահատել և եզրահանգումներ կատարել: Ակնհայտ է, որ քննադատաբար մտածելու կարողությունը կարող է արդյունավետորեն ձևավորվել և զարգանալ ուսումնական բարենպաստ միջավայրում: Ժամանակակից մարդուն նոր սոցիալ-տնտեսական միջավայրում իրեն հարմարավետ ու լավ զգալու համար անհրաժեշտ է, որ նա կարողանա արագ հարմարվել կյանքի փոփոխվող իրավիճակներին, ինքնուրույն ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ՝ դրանք կիրառի ծագող խնդիրների լուծման համար: «Հանրակրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու

[2] Поль Р. У. Критическое мышление: Что необходимо каждому для выживания в быстро меняющемся мире / Перевод с англ. / Р.У Поль. —1990. — 5 с.
[3] Заир-Бек С.И. Развитие критического мышления на уроке: Пособие для учителя / С.И. Заир-Бек. – М.: Просвещение, 2011. – 219 с

ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը[4]»:

Զարգացած քննադատական մտածողության առկայությունը առավել հեշտացնում է սովորողների իմացական զարգացումը, վերջիններս առավել հեշտ են ընկալում ուսումնական նյութը: Զարգացած քննադատական մտածողության առավելություններն են.

- Փաստերը տարբեր տեսանկյունից դիտելու ունակություն:
- Տարբեր երևույթների միջև պատճառահետևանքային կապեր գտնելու ունակություն:
- Հնարավորություն է տալիս իրավիճակի վերաբերյալ համակողմանի վերլուծություններ կատարել:
- Օգնում է արդյունավետորեն լուծել խնդիրները, արագ կողմնորոշվել:
- Թույլ է տալիս տրամաբանված ու քննադատական կարծիք հայտնել, դատողական խոսք ասել:

Քննադատաբար մտածել սովորեցնելը հեշտ գործ չէ: Դեպի քննադատական մտածողություն տանող սահմանված մանկավարժական քայլեր գոյություն չունեն: Սակայն որոշակի պայմաններ և աշակերտների պատկերացումներ կարող են նպաստել քննադատական մտածողության զարգացմանը: Քննադատական մտածողությունը խթանելու համար ուսուցիչները պետք է ընտրեն մանկավարժական աշխատանքի ներքոբերյալ քայլերը.

- Թույլ տալ, որ սովորողն ինքնուրույն մտածի:
- Ընդունել և լսել սովորողների տարբեր գաղափարներն ու կարծիքները:
- Նպաստել սովորողների ակտիվ ներգրավմանը ուսումնական գործընթացում:
- Աշակերտների համար ապահովել բարոյահոգեբանական առողջ ու մրցակցային միջավայր:
- Հավատ ներշնչել յուրաքանչյուր աշակերտի մեջ՝ քննադատաբար մտածելու կարողության նկատմամբ[5]:

[4] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 5:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման արդյունավետությունը մեծապես կախված է նաև ուսուցչի վարպետությունից: Տարրական դպրոցի ուսուցիչը պետք կարողանա յուրաքանչյուր մեթոդ տեղին ու ժամանակին կիրառել՝ աշխատանքը դարձնելով ոչ միայն արդյունավետ, այլ նաև ամեն մի երեխայի համար հաճելի, ընդունելի ու կարևոր: Ուսուցիչն անընդհատ պետք է վերանայի իր մանկավարժական կենսափորձը: Նոր տեխնոլոգիական գործիքները, դասի բազմաբնույթ ձևերն ու տեսակները, մեթոդների բազմազանությունն առաջին հայացքից կարող են ուսուցչի աշխատանքային գործընթացում ստեղծել խառնաշփոթ՝ դրանց ճիշտ ընտրության ու կիրառության առումով, սակայն ուսուցիչը պետք է գիտակցաբար մոտենա նորարարություններին, փորձի դրանք ընկալել ոչ թե ավելորդ պարտադրանք, ժամանակատար գործընթաց, այլ յուրաքանչյուր նորարարական գաղափարի մեջ փնտրի, գտնի այն հետաքրքիր կետը, որից պետք է սկսի իր ինքնազարգացումը: Անշուշտ, նորարար ուսուցչի հետաքրքիր գաղափարները միտված են մեկ նպատակի՝ սովորողին տալ հանրակրթական ծրագրերին համապատասխան գիտելիք և կարողունակություններ: Այս առումով շատ կարևոր են մանկավարժական գործունեության մեջ նրա մղումներն ու ձգտումները: Կարևոր է նաև, որ ուսուցիչը փորձի հանդես գալ որպես նորարար: Դիտարկենք մանկավարժական կոլեկտիվում նորամուծությունների իրացմանը պատրաստ խմբերին:

Առաջին խումբ՝ նորարարներն են, որ մշտապես ձգտում են նորի իրագործմանը:

Երկրորդ խումբ՝ նորամուծությունների վաղ իրականացնողներն են, որ անմիջապես գնում են նորարարների հետևից, բայց նրանցից տարբերվում են ցածր ռիսկի աստիճանով և հանդես են գալիս որպես խորհրդականներ:

Երրորդ խումբ՝ յուրացնում են նորամուծությունները անմիջապես վաղ իրականացնողների հետ, բայց հազվադեպ են հանդես գալիս առաջնորդի դերում:

---

[5] Գ. Հարությունյան, Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման միջոց արդի դպրոցում, ՀՊՄՀ, Երևան, 2014:

Չորրորդ խումբ՝ նորամուծություններն ուշ իրականացնող մեծամասնությունն է, որին հատուկ է սկեպտիցիզմը, նորամուծությունները յուրացնում են որպես միջին սուբյեկտ՝ իրենց պահանջմունքների գնահատման արդյունքում:

Հինգերորդ խումբ՝ կազմում են տատանվողները, որոնք ամենավերջինն են յուրացնում նորամուծությունը, նրանց հատուկ է բավական կայուն վերաբերմունքը[6]:

Աջակցող կրթական միջավայրը կրթական գործընթացի կարևորագույն կողմերից է, որտեղ պետք է գերիշխի փոխադարձ վստահության մթնոլորտը, հարգանքը, ինչն իր հերթին խթան է հանդիսանում ստեղծագործականության և ինքնուրույնության համար: Այն իր հերթին կարևորում է կոլեկտիվ ուսուցումը և ամրապնդում սովորողների միջև հարաբերությունները:

2. Ստեղծագործական մտածողության զարգացման անհրաժեշտությունը կրտսեր դպրոցում

«Եթե ցանկանում եք մտածել սովորեցնել, ապա, նախևառաջ պետք է հորինել սովորեցնել[7]»,- համոզված է Ջաննի Ռոդարին: Ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր կրթության գլխավոր նպատակներից մեկն է: Սովորողների ստեղծագործական մտածողության, կարողությունների ձևավորումն ու զարգացումը դիտարկվում է որպես կրթության կարևոր խնդիր, միևնույն ժամանակ՝ այն կարևոր հանգամանք է ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու համար: Ստեղծագործական մտածողությունը մարդու հոգեբանական այնպիսի առանձնահատկություններ են, որոնցից կախված է գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերումը:

---

[6] Լ. Ասատրյան, Մ. Ասատրյան, Ն. Սաֆարյան, «Դպրոցի կառավարման հիմունքները», ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2018:

[7] Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995, էջ 13

Հարկավոր է երկարատև մանկավարժական աշխատանք, որը հնարավորություն կստեղծի աստիճանաբար զարգացնել սովորողների ստեղծագործական մտածողությունը: Ուսումնական գործունեության արդյունավետությունը, աշակերտների վերաբերմունքը ուսման նկատմամբ և նրանց բոլոր հաջողությունները հետագա գործունեության ընթացքում պայմանավորված են նաև մանկավարժահոգեբանական առանձնահատկություններով: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաներն ունեն կոնկրետ՝առարկայական մտածողություն. նրանք ավելի դյուրին են ընկալում, հասկանում և յուրացնում այն, ինչ կապված է իրենց կենսափորձի հետ, ինչ տեսել են, զգացել, ըմբռնել և կատարել են: Նրանց մտածողությունը ձևերով, գույներով և ձայներով է: Կրտսեր դպրոցական տարիքը ճանաչողական գործունեության ակտիվացման փուլ է. նրանք սկսում են հետաքրքրվել և իրականացնել մտավոր պարապմունքներ, իրենց ունեցած և նոր յուրացրած գիտելիքները կիրառել նոր պայմաններում, պարզ եզրահանգումներ անել և այլն[8]:

Հաշվի առնելով կրտսեր դպրոցականների մանակավարժահոգեբանական առանձնահատկությունները՝ պետք է ուսուցման գործընթացը կազմակերպել՝ օգտագործելով երեխաների բոլոր զգայարանները. ուսուցիչն ավելի քիչ պիտի խոսի, ավելի շատ ցուցադրի, ավելի քիչ կատարի, ավելի շատ մասնակից դարձնի: Ուսուցչի դերը սովորողների ստեղծագործականության զարգացման համար, ինչպես արդեն նշեցինք, առանցքային է: Այս ուղղությամբ տարվող ուսուցչի գործողությունները բազմազան են, առանձնացնենք դրանցից մի քանիսը.

- սովորողի ստեղծագործական ներուժի բացահայտում, համակարգում
- սովորողին իր ընտրած գործունեության ոլորտում ուղղորդում,աշխատանքի կազմակերպման ձևերի և մեթոդների պարզաբանում
- ստեղծագործական կարողություններով և հմտություններով սեփական անձի ապահովում
- սովորողին խրախուսում, մոտիվացիա
- արդյունավետ հետադարձ կապի ստեղծում

[8] Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան 2018, էջ 21

- սովորողին ինքնանդրադարձ կատարելու հարցում օժանդակություն
- մեթոդամանկավարժական հնարների ճիշտ ընտրություն
- սովորողի ստեղծագործական ու ստեղծարար ցանկություններին դրական վերաբերմունք
- դասի ընթացքում բարոյահոգեբանական կայուն մթնոլորտի ապահովում, բարեկամական միջավայրի խրախուսում
- ստեղծագործականության մեջ սովորողին անհրաժեշտ միջոցներով օժանդակում:

Պիտի երեխաներին առաջարկել մտածել այն մասին, ինչը հարազատ է իրենց, հատուկ է իրենց տարիքին, պատմել այն մասին, ինչ իրենց հետ է տեղի ունեցել, հակառակ դեպքում՝ կունենան դժվարություններ: Եթե դպրոցական առաջին տարիներին երեխաները շատ աշխատում են ակնառու պատկերներով, ապա հաջորդ դասարաններում նրանց ծավալը կրճատվում է: Մինչև աշակերտը ակտիվ ստեղծագործական գործունեությամբ չմասնակացի գիտելիքների ձեռքբերման գործընթացին (գծել, կտրել, նկարել, կառուցել, ներկել, համեմատել, հակադրել, մտածել, խոսել, դատել, եզրակացնել), նա չի կարող ամբողջությամբ հասկանալ, մտապահել գիտելիքները և իմաստավորել դրանք:

Աշակերտները պարտավոր են անսխալ մտապահել օրվա ռեժիմի, վարքի կանոնները, տնային առաջադրանքները: Նրանք պետք է կարողանան ղեկավարվել այդ կանոններով, իսկ մտապահված նյութը վերարտադրել դասի ժամանակ: Երեխաները ձեռք են բերում հիշելու խնդիրները տարբերակելու կարողություն, որոշ դեպքերում պահանջվում է նյութը վերարտադրել բառացիորեն, այլ դեպքերում՝ միայն պատմել «սեփական բառերով» և այլն: Կրտսեր դպրոցականների վարքում աստիճանաբար առաջանում է մտածողության ուրիշ տրամաբանություն.ուսումը նշանակալից է դառնում,փոխվում են հետաքրքրությունները,երեխայի կյանքի ամբողջ դրվածքը[9]: Սկզբնական շրջանում երեխաները օգտագործում են մտապահման շատ պարզ եղանակներ, բազմիցս կրկնում են նյութը և այն տրոհում են այնպիսի մասերի, որոնք չեն համընկնում իմաստային միավորների հետ:

[9] И.Ю. Кулагина, В. Н. Колюцкий, Возрастная психология, ТЦ. Сфера, 2001, 464 с.

Մտապահման արդյունքների վերահսկողությունը կատարվում է միայն ճանաչման մակարդակի վրա: Օրինակ, առաջին դասարանցին կարող է տեսողությամբ ընկալել տեքստը և կարծել, որ արդեն սովորել է այն, քանի որ ունի «ծանոթության զգացում»: Միայն շատ քիչ թվով երեխաներ են կարողանում ինքնուրույնաբար անցնել կամածին մտապահման խելամիտ հնարների օգտագործմանը: Նրանց մեծ մասը այդ ունակությունը ձեռք բերելու համար պետք է հատուկ կերպով ու տևականորեն մարզվի դպրոցում և տանը: Այս աշխատանքը պետք է կատարվի երկու ուղղություններով: Առաջինը երեխաների իմաստավորված մտապահման հնարների (նյութը իմաստային միավորների բաժանելը, իմաստային խմբավորումը, իմաստային համադրումը և այլն) ձևավորումն է, իսկ երկրորդը կապված է ժամանակի ընթացքում բաշխված վերարտադրության, ընչպես նաև սեփական վերարտադրության արդյունքների վրա վերահսկելու հնարների ձևավորման հետ: Երեխաներն աստիճանաբար գիտակցում են իրենց սոցիալական «Ես»-ը, ձևավորվում է «ներքին սոցիալական դիրքորոշումը» ինքնագանահատականը,ձգտում են իրենց արժանի տեղն ու դերն ունենալ միջավայրում,վայելել մեծերի հարգանքը,աչքի ընկնել:

Կրտսեր դպրոցականներն ուսումնական գործընթացում աստիճանաբար սկսում են կարևորել ընկերների խոսքը, ընկալել խոսքային հարաբերությունները, մեծերի և տարեկիցների հետ ազատ զրույցի են բռնվում, ճշգրիտ և ամբողջական նախադասություններով կարողանում են պատասխանել իրենց տրված հարցերին, լրացնել ու շտկել ընկերների պատասխանները: Լինում են իրադրություններ, երբ երեխան հանդիպում է իրեն անծանոթ խնդրի: Նա նախ փորձում է իրեն ծանոթ միջոցներով լուծել այն, բայց երբ հաջողության չի հասնում, մի պահ ընկրկում է, շարժումները դանդաղում են: Հենց այդ դանդաղման ընթացքում էլ մտածողությունն սկսում է ներգրավվել երեխայի գործունեության մեջ: Նա սկսում է «փնտրտուքի» գործողություններ կատարել՝ փոփոխում է դիրքը, օգտագործում է իր իմացած այլ միջոցները, բայց շուտով հրաժարվում է դրանից և իր ուշագրությունը կենտրոնացնում է առարկայի և գործողությունների միջոցների վրա: Դրան հաջորդող փուլերում աստիճանաբար ավելի ցայտուն են դառնում նպատակաուղղված գործողությունները, ինչն, իհարկե, վկայում է մտածողության ակտիվ դերի մասին:

Այսպիսով, ստեղծագործական անհատականության զարգացումը, որը պատրաստ է սոցիալական նշանակալի գործառույթների իրականացմանը, սոցիալական փոխակերպման ժամանակակից հասարակության, նաև դպրոցի էական խնդիրներից մեկն է: Ստեղծագործական անհատականության զարգացման խնդիրը մենք դիտարկում ենք աճող մարդու իրական կարողությունների զարգացման համատեքստում, որոնք ձևավորվում և մարմնավորվում են տարբեր տեսակի ճանաչողական և ստեղծագործական գործունեության մեջ: Այս գործընթացի ընթացքում ի հայտ են գալիս նախաձեռնողականություն, ինքնուրույնություն, բացահայտվում է անհատի ստեղծագործական ներուժը:

Այսպիսով, կրտսեր դպրոցականի ակնառու-գործնական մտածողությունը զարգանում է պրակտիկ գործունեության ընթացքում, ապա՝ դանդաղորեն զարգանում է նաև վերացական մտածողությունը:

3. Հարցադրումների մեթոդի դերը՝ կրտսեր դպրոցականի ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացման գործում

Ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր կրթության գլխավոր նպատակներից մեկն է: Այս գործընթացի տրամաբանական շարունակությունը դպրոցում սովորողի ստեղծագործականության ձևավորումն ու զարգացումն է, ինչի բնականոն իրականացման հեքը կարելի է համարել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության արդիականացումը: Հարցադրումների կիրառությունը դասավանդման գործընթացում ամենահզոր գործիքներից մեկն է, և դրանց ճիշտ կիրառությունը զգալիորեն կարող է բարձրացնել ուսուցման որակը, ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը, ձևավորել ու զարգացնել ստեղծագործական և քննադատական մտածողությունն առարկայի դասավանդման շրջանակներում: Հարցադրումների կիրառությունը թույլ

կտա ուսուցչին ոչ միայն ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը: Այստեղ կարելի է համոզմունք հայտնել այն հարցի շուրջ, որ սովորողի ներգրավվածությունը դասին մեծապես ապահովում է ուսուցման դրական որակի առաջընթացը: Ավելին՝ ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են սովորողների ինքնավստահությունը:

Ուսուցման ընթացքում տարբերում են դասավանդման պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ: Ակտիվ մեթոդները հիմնված են ուսուցիչ-սովորող համագործակցության վրա, այսինքն ուսուցիչը և սովորողը հավասարապես մասնակցում են ուսումնական պրոցեսին: Սովորողները պասիվ լսողներ չեն, այլ ակտիվ մասնակիցներ: Ակտիվ մեթոդների նպատակն է՝ բոլոր պրոցեսների՝ խոսք, հիշողություն, երևակայություն օգտագործումը գիտելիքների, հմտությունների յուրացման համար: Սովորողը գիտելիք է ստանում տարբեր աղբյուրներից ինֆորմացիայի վերլուծման արդյունքում: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորելու, ճանաչողական գործունեություն ծավալելու ուղիներն են, ինչի համար ուսանողները պետք է մտածեն, ստեղծագործեն[10]: Այս մեթոդները, որոնց թվին է պատկանում նաև հարցադրումներ մեթոդը, հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, ուսանողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: Ստացվում է որ, հարցադրումների մեթոդի կիրառումը ապահովում է կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից: Որպեսզի գործընթացն արդյունավետ լինի, ուսուցչի կողմից նախօրոք մշակված հարցադրումները պետք է լինեն.

- **հստակ**
- **նպատակառուղղված**

[10] http://armedin.am/wp-content/uploads, Ակտիվ, Ինտերակտիվ ուսուցման մեթոդներ, էջ 2:

- **հակիրճ**
- **վերջնարդյունքին համապատասխան**
- **ունենան տրամաբանական հաջորդականություն**
- **մտածելու տեղիք տան**
- **ստեղծեն հետադարձ կապ**

Մանկավարժության մեջ սովորողին տրվող հարցերը բաժանվում են մի քանի տեսակի, դրանք են.

- **Բաց**
- **Փակ**
- **Հուշող**
- **Ենթատեքստով**
- **Հետադարձ**
- **Ուղղորդող**

Չափից շատ հարցերի օգտագործումը կարող է հանգեցնել բացասական արդյունքների և աշակերտների պասիվության: Բարձր մտածական գործընթացների զարգացման համար էական կարևորություն ունեցող տեխնիկաներից մեկը սպասելու ժամանակն է, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, և հետագա երկխոսության առաջացման վրա: Սխալ է, երբ ուսուցիչը պատասխանում է իր իսկ հարցերին, և այդպիսի վարքագիծը արագորեն դառնում է ինքնախաբեության ձև: Սովորաբար, եթե ուսուցիչը նպատակ է դրել հարցադրումների մեթոդի օգնությանմբ զարգացնել սովորողների ստեղծագործականությունը, հարցը պիտի ձևակերպվի հետց այդ ենթատեքստի շրջանակներում: Օրինակ՝ Կարծու՞մ ես այդպես ճիշտ է, կամ ինչպե՞ս կվարվես, եթե...:

Սովորողն այսպես դուրս է գալիս գիտականության կաղապարից և հնարավորություն ունենում անկաշկանդ երևակայել, հորինել, պատասխանել ստեղծագործաբար ու քննադատաբար: Բարձր մտածական գործընթացների, համար էական կարևորություն ունի սպասելու ժամանակը, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, ինչպես նաև հետագա երկխոսության առաջացման վրա: Սպասելու ժամանակը հարցի և աշակերտի պատասխանի միջև

ընկած ժամանակահատվածն է կամ ուսուցչի առաջին և երկրորդ հարցերի միջև ընկած ժամանակահատվածը: Եթե հարցը լսելուց հետո աշակերտները չեն արձագանքում համեմատաբար կարճ ժամանակահատվածում, ուսուցիչը հաճախ պետք է փորձի առաջ տանել զրույցը՝ կրկնելով, վերաձևակերպելով հարցը կամ դիմելով աշակերտներին: Ավելի բարդ հարցերի դեպքում, որոնք պահանջում են բարդ կոգնիտիվ վերլուծություններ, հնարավոր է անհրաժեշտ լինի տրամադրել աշակերտներին 1-2 րոպե, նախքան պատասխանելը:

Եկենք նկատենք, որ հարցադրումների մեթոդի հիմքը սովորողի լեզվամտածողությունն է, խոսքային կարողությունը: Բանավոր խոսքը անհատի մտավոր կարողությունների կարևոր դրսևորումներից է: Դրա զարգացումը տեղի է ունենում մարդու կյանքի ընթացքում և անընդհատ ենթարկվում է մշակման և հետևողական լինելը պարտադիր է: Սովորողը պետք է վստահի խոսակցին, ցանկանա խոսել, հաղորդակից դարձնել իր մտքերին, պամի իր ներսում եղած խոհերի մասին: Դա հնարավոր է ապահովել միայն համապատասխան միջավայրի, բարյացակամ վերաբերմունքի և ուշադիր, հետաքրքրասեր ունկնդրության մթնոլորտ ստեղծելու դեպքում: Պակաս կարևոր չէ չկաշկանդել սովորողի ինքնուրույն մտածողությունն ու դրանից բխող խոսքը: Հարկավոր է թույլ տալ, որ սովորողն իր մեջ կուտակված ֆանտազիաները, պատկերացումներն անպայման արտաբերի:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ուսուցչի կողմից տրվող կառուցողական, բազմաբովանդակ հարցերը դասի ընթացքում ոչ միայն թույլ են տալիս չափել սովորողի իմացածի ու չիմացածի սահմանները, գնահատել նրա խոսքային կարողությունները, այլ նաև մեծապես նպաստում են վերջինիս ստեղծագործական և քննադատական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Կրտսեր դպրոցականների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման հնարավորությունները «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման ընթացքում

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է սովորողների մեջ ձևավորել շրջապատի նկատմամբ ուշադիր լինելու, հետազոտելու, խնամելու, պահպանելու, բարեկարգելու կարողությունները, նպաստել հաղորդակցվելու, համագործակցելու,շրջապատող մարկանց նկատմամբ հարգալից լինելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Միևնույն ժամանակ՝ այս ուսումնական առարկայի դասագործընթացին հնարավոր է զարգացնել սովորողի մտածողությունը: Մասնավորապես՝ ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացման համար առարկայի ծրագրային նյութը լավ հնարավորթություններ է ընձեռում:

Նշենք, որ ուսումնասիրել ենք «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկայի նոր դասագիրքը՝ հեղինակներ՝ Ն. Պողոսյան և Կ. Մարգարյան: Նկատենք, որ ուսումնական նյութն ամբողջապես կառուցված է կոնկրետ ու առարկայական օրինակների ու ձևակերպումների վրա, ինչը թույլ կտա զարգացնել սովորողների սոցիալական հմտությունները, ձևավորել քննադատական մտածողություն: Գրքային հերոսների արարքները ուսումնասիրելով ու վերլուծելով՝ սովորողները կարող են դատողական խոսք հնչեցնել՝ կարծիք հայտնելով լավի, բարու, ընկերության, նաև՝ չարի, ծուլության, անփութության մասին: Կարծիքի առակայությունը ենթադրում է նաև վերաբերմունք, որ սովորողի մոտ կձևավորվի թե' դրական, թե' բացասական երևույթների նկատմամբ:

Դիտարկենք կրտսեր դպրոցականների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման հնարավորությունները «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման ընթացքում՝ հիմնվելով մեր մանկավարժական փորձի վրա:

«Միասին ապրելու կանոնները» վերնագրի տակ տեսնում ենք մի քանի ենթավերնագրեր, որոնցից է «Ընկերությունը»: Ինչպե՞ս արդյունավետ իրականացնել նշված թեմայի ուսումնասիրությունն առարկայի դասավանդման ընթացքում,

որպեսզի հնարավոր լինի զարգացնել նաև ստեղծագործական ու քննադատական մտածողությունը, դիտարկենք մի քանի օրինակներ.

1. Սովորողներին բաժանել խմբերի, յուրաքանչյուր խմբի տալ մեկ նկար, որի շուրջ հանձնարարել առաջադրանքների փունջ՝
   - պատմել նկարի բովանդակությունը
   - դրա շուրջ գրել բանալի բառեր
   - հատկանշավորել նկարի հերոսներին
   - փորձել բացատրել նրանց պահվածքն ու վարքը

Նկարում (*տես՝ Հավելված 1*) պատկերված են երկու տարբեր իրավիճակներ: Այս հակադրությունը թույլ կտա, որ սովորողների քննադատական մտածողությունը զարգանա, նրանք կարողանան գնահատողական խոսք կառուցել:

Նկատենք, որ պատմելու կարողության ձևավորումը բարդ գործընթաց է և կրտսեր դպրոցում դասի կարևոր փուլ է հանդիսանում: Եվ, ցույց տալու համար այդ կարևորությունն ու վերջինիս ունեցած նշանակությունը կրտսեր դպրոցականի ստեղծագործական ու քննադատական մտածողության ձևավորման հարցում, հարկ ենք համարում ուսումնասիրել տարրական դասարաններում կիրառվող պատմելու տեսակները, դրանց նշանակությունը: Տարրական դպրոցի բոլոր չորս տարիների համար էլ պատմելը համարվում է տարվող աշխատանքներից ամենակարևորը: Եվ դա պատահական չէ, քանի որ կրտսեր դպրոցական տարիքում վերարտադրումը համարվում է մենախոսական խոսք կազմելու առաջին փորձը: Իհարկե, առավել բարդ է դիտել պատկերը, նկարն ու պատմել դրա բովանդակությունը, այդու հանդերձ սա ունի իր առավելությունները՝ մտածողության, խոսքային կարողության զարգացում, բառապաշարի հարստացում: Պատմելու ժամանակ պետք է արտացոլվի աշակերտի զգացողությունները, մյուս աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնելու ցանկությունը, հիացմունքը, ուրախությունը: Եթե պատմելու ընթացքում նկատվում են նրա զգացմունքները, ապա պատմելու ստեղծագործական մակարդակը բարձր է[11]: Աշոտ Տեր-Գրիգորյանն իր «Հայոց լեզվի մեթոդիկա» ձեռնարկում տարբերում է պատմելու հետևյալ տեսակները. մանրամասն պատմել,

[11] Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, Երևան 2014թ.,

համառոտ պատմել, փոփոխելով պատմել, ստեղծագործելով պատմել, ընտրովի պատմել: Պատմելու բոլոր տեսակներն էլ մենախոսություններ են, իսկ պատմելու բոլոր ձևերով վերարտադրելու կարողությունները զուգահեռաբար են ձևավորվում՝ նպաստելով կրտսեր դպրոցականների ստեղծագործական ու քննադատական մտածողության զարգացմանը:

2. Կարելի է կիրառել հարցադրումների մեթոդը, որը նույնպես մեծապես կարող է օգնել սովորողների մտածողության զարգացմանը: Փոքրիկ զամբյուղի մեջ ուսուցիչը կտեղավորի նախօրոք պատրաստված հարցերը՝ վերաբերող «Մենք վիճում ենք և լուծումներ գտնում» ենթաթեմային՝ «Ես և շրջական աշխարհը» 2-րդ դասարան:

1. Հաճա՞խ ես վիճում դասընկերներիդ հետ:

2. Կարծում ես տարաձայնությունները հարթելու համար վիճելը պարտադի՞ր պայման է:

3. Ինչպե՞ս ես հարթում դասընկերոջդ հետ ունեցած վեճը:

4. Ի՞նչ լուծում կառաջարկես, որ դասարանում այլևս վեճեր չլինեն:

5. Կարծում ես հանդուրժողականությունը լա՞վ հատկանիշ է, թե ոչ, հիմնավորի՛ր պատասխանդ:

Սովորողները հարցերին կպատասխանեն ինքնուրույն, առանց ուսուցչի միջամտության, ինչը կնպաստի նաև վերջիններիս ինքնուրույնության զարգացմանը:

Այսպիսով, կարծում ենք, որ ներկայումս ուսուցիչը հնարավորություն ունի մեծ արդյունավետությամբ կրտսեր դպրոցականների մեջ ձևավորել ստեղծագործական և քննադատական մտածողություն: Այս հարցում հաջողության հասնելու համար վերջինս կարող է կիրառել բազմաթիվ մանկավարժական մեթոդեր ու հնարներ, ՏՀՏ-ներից օգտվել, տարպեր տիպի դասեր վարել: Ամեն ինչ հենց ուսուցչի ձեռքում է, մնում է միայն արդյունավետորեն կիրառել բոլոր մանկավարժական գործիքները՝ հաջողության հասնելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, եթե ընդհանրացնենք մեր ուսումնասիրության արդյունքները, կարող ենք կատարել հետևյալ դիտարկումները.

- Կրտսեր դպրոցականների կրթության, դաստիարակության լիարժեքության համար, պարտադիր պայման է վերջիններիս ստեղծագործական ու քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը ուսումնական ծրագրերով նախատեսված առարկաների, այդ թվում՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման ընթացքում:
- Կիրառելով հարցադրումների տարատեսակները՝ ուսուցիչը կարող է միջավայր ստեղծել, որպեսզի զարգանա սովորողի մտածողությունը, իմացական ոլորտը, դասին բարձրանա վերջինիս ակտիվ մասնակցությունը:
- Ուսուցչի մասնագիտական որակները, նորարարական գաղափարների ներդրումը դասին մեծապես կօգնի սովորողին նույնպես հանդես գալ որպես նորարար, նախաձեռնող ու ստեղծագործ:
- Ուսումնական գործընթացում կիրառվող մեթոդները, ակտիվ դասերը ուղիղ ազդեցություն կարող են ունենալ սովորողի ստեղծագործական ու քննադատական մտածողության զարգացման վրա:

Կարծում ենք՝ այս ուսումնասիրությունը կունենա իր դրական ազդեցությունը մեր մանկավարժական հետագա գործունեության վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 5:
2. Ա. Պետրովսկի, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն,Երևան 1977:
3. Գ. Հարությունյան, Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման միջոց արդի դպրոցում, ՀՊՄՀ, Երևան, 2014:
4. Լ. Ասատրյան, Մ. Ասատրյան, Ն. Սաֆարյան, «Դպրոցի կառավարման հիմունքները», ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2018:
5. Ջ. Ռոդարի, Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995:
6. Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան 2018:
7. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, Երևան 2014:
8. http://armedin.am/wp-content/uploads, Ակտիվ, Ինտերակտիվ ուսուցման մեթոդներ:
9. И.Ю. Кулагина, В. Н. Колюцкий, Возрастная психология, ТЦ. Сфера, 2001:
10. Халперн Д. Психология критического мышления / Перевод с англ. / Д. Халперн. М.: Питер, 2000. 6 с.
11. Поль Р. У. Критическое мышление: Что необходимо каждому для выживания в быстро меняющемся мире / Перевод с англ. / Р.У Поль. —1990.
12. Заир-Бек С.И. Развитие критического мышления на уроке: Пособие для учителя / С.И. Заир-Бек. – М.: Просвещение, 2011.